

Վոնդակ օրհնութեան Գրիգոր Շիօյեանին 300 մ. նուիրելու համար, Փետր. 4, № 49:

Վոնդակ օրհնութեան Երեանցի Ալեքսանդր Ն. Թայիրեանին 300 մ. նուիրելու համար, Փետր. 4, № 50:

Վոնդակ օրհնութեան Ալեքսանդր Մելիք Աղաբեանին 300 մ. նուիրելու համար, Փետր. 4, № 53:

Վոնդակ օրհնութեան Ծովիանեան եղբայրներին 250 մ. նուիրելու համար, Փետր. 4, № 54:

Վոնդակ օրհնութեան Յովհաննէս Էմինեանին 300 մ. նուիրելու համար, Փետր. 4, № 55:

Վոնդակ օրհնութեան և շնորհակալութեան ընդհանրապէս Թիֆլիսի Ժողովրդին Ճեմարանի ննջարանի շինութեանը օգնելու և նպաստելու համար, Փետր. 8, № 64:

Վոնդակ Թիֆլիսի Աւետեաց եկեղեցու միաբան Գէորգ ք. Աբուլեանին, որով կշնորհէ նորան կամիլավկա կրելու իրաւունքը առ Էջմիածինն ցոյց տուած հաւատարմութեան և Վեհ. Հայրապետի նուիրակ Խորէն Ա. Ստեփանէին ընձեռած գործակցութեան համար, Փետր. 4, № 56:

Վոնդակ Թիֆլիսի Վուկրայի Աստուածածնի եկեղեցու միաբան Եսայի ք. Տէր Նիկողոսեանին, որով կշնորհէ նորան արձաթեայ ոսկեղօծ խաչ կրելու իրաւունքը իւր առանձին ջերմեռանդութեան համար առ Ս. Էջմիածինն, և Խորէն Ա. Ստեփանէին օգնելու համար, Փետր. 4, № 57:

Վոնդակ օրհնութեան և շնորհակալութեան Մկրտիչ Սանասարեանին յօգուտ Ճեմարանի 1500 մ. նուիրելու և նպաստահաւաքութեանն օգնելու համար, Փետր. 8, № 65:

* * *

Ս. ԷԶՄԻԱՅՆԻ ՍԻՆՈՂԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՎՃԻՌՆԵՐ:

Ի 13 հոկտեմբերի 1879 ամի: Առաքմամբ միոյ օրինակի խոնարհեալ ծրարի հաստատելոյ ի Վեհափառ Հայրապետէ վասն ծխական դպրոցաց Հայոց, ի կողմանէ Սինոդիս հրամանագրել կառավարչի թեմին Կարուց Գրիգորիս Եպիսկոպոսի Աղուանեան, համաձայն հեռագրական առաջադրութեան նորին Սրբութեան, բանալ գերկսեռ զծխական դպրոցսն Հայոց Կարուց եւ շարունակել տալ զուսումն համաձայն այնո՞ւ ծրագրի, նոյնպէս բանալ հեռագիտէ զծխական դպրոցս յամենայն զիւղօրոյս վիճակին եւ զամենատեսակ տարեկան հաշիւս զյուսաշաղկապութեանց աշակերտաց եւ զաւանդեալ առարկայից ուսմանցն մատուցանել Սինոդիս, եւ ի դէպս պահանջելոյ նահանգապետի տեղոյն զոր եւ իցէ տեղեկութիւնս վերաբերմամբ ծրխական դպրոցաց վիճակին յայանել նորին զերազանցութեանն, զի նա զկարեւոր տեղեկութիւնս եւ զգրագրութիւնս զհոգեւոր ծխական դպրոցաց պահանջեսցէ ուղղակի ի Սինոդէն:

Ի 22 հոկտեմբերի 1879 ամի: Հրամայեցաւ տալ լուծումն կոնսիստորիային Տփլիսու, վասն ճոյլատրելոյ օգնականի երիցփոխական Աւետեաց եկեղեցւոյն Տփլիսու, նո-

րողել զայրեցեալ խաչկան եւ զներքին մասունս այնր եկեղեցւոյ հանդերձ պատկերօր ծախուք եւ նուիրանօք բարեպաշտ ժողովրդականաց տեղւոյն առանց ձեռնամուխ լինելոյ յեկեղեցական դումարս, այնու զի ծախք այնց նորոգութեանց եղիցին ընդ ձեռն կարգեալ առանձին յանձնաժողովոյ, որում եւ յանձնել զի յանձնաժողով այն փոյթ կալցի հաւաքել զյօժարակամ նաւէրս ի բարեպաշտօն անձանց ի պէտս այնց վերանորոգութեանց, եւ զծախսն առնել ի նուիրեալ գումարաց ճիշտ արձանադրութեամբ ի ժապաւիճեալ մատեան:

Ի 22 հոկտեմբերի 1879 ամի: Ըստ ներկայ թախանձանաց եղիայ՝ վարդապետի Զալալեան կարգել զնա ի պաշտօն վանահայրութեան ի վանս Ամարասայ, զորմէ եւ տալ զիտել Փոխանորդին Ղարաբաղու վասն պարտաւատաշանն անօրէնութեան առ ի թոյլատրելոյ նմա մտանել ի վարումն վանահայրական պաշտօնին ըստ սահմանեալ կարգին, նոյնպէս եւ ծանուցանել Եղիայ վարդապետին ընդ ձեռն վանահօր Սեւանայ:

Ի 22 հոկտեմբերի 1879 ամի: Զվերոյդբեալ խոստմանէ բժիշկ Սողոմոնի Սաժուճեան ծանուցեալ Թեմական տեսչի զարոցաց Երեւանայ Թեմի Կարապետ վարդապետի Ալվազեան եւ վանահօրն սրբոյն Գէորգայ վանից Մուղնոյ, պատուիրել առաջնոյն հրաւիրել զնորին բարեմենդութիւնն ըստ խոստման իւրում, ի ներկայութեան յիշեալ Թեմական տեսչի ի կատար ածել շինութիւն օրիորդական դպրոցին ի պարսպի Սուրբ Մարիամէ եկեղեցւոյն Աշտարակայ ամենայն պատրաստութեամբ, իսկ վերջնոյն յանձնել վասն հրաւիրելոյ զնա ի ձեռնարկութիւն շինութեան երկուց սենեկաց ի սրահի սուրբ Գէորգայ վանից Մուղնոյ ի պէտս ուխտաւարաց եւ հիւրոց վասն յիշատակի անուան հանգուցեալ հօր իւրոյ, եւ զհետեւանացն յայտնել Սինօղիս:

Ի 22 հոկտեմբերի 1879 ամի: Ի յարգանս բացատրեալ ի վեր տնոր ջերմեւանդ եւ հաւատարիմ ծառայութեանց երեցփոխանի եկեղեցւոյն Փարաքար դեղջ Փիլիպպոսի տէր Մատթէոսեան, եւ նուիրագործութեանց նորա յօգուտ եկեղեցական զբարոցի տեղւոյն, առաքմամբ մատուցեալ ի Կոնսիստորիայէն Երեւանայ իսկական ցուցակի ծառայութեանց նորա, խնդրել զտնօրէնութիւն կառավարչի գլխաւոր կառավարութեան փոխարքային Կովկասու, վասն վարձատրելոյ զնա շրանշանաւ սրբոյն Ստանիսլաւի Յդ աստիճանի, համաձայն միջնորդութեան եւ առաջարկութեան Թեմական իշխանութեանն Երեւանայ, յարակցելով թէ ըստ հաւաստութեան պօլիցիական իշխանութեանն Երեւանայ, յիշատակեալ Տէր Մատթէոսեանն ի մարդահաշուական մատենին գրեալ է ի Թիւս աղատականաց, ընդ ընկուծեամբ եւ զատաստանաւ չէ անկեալ, եւ առ վարձատրութիւն նորա խնդրեալն շրանշանաւ ի կողմանէ նահանգական իշխանութեանն չիք արդելը: Զայսմանէ տալ տեղեկութիւն եւ Կոնսիստորիային Երեւանայ առանձին հրամանաւ:

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷԶՄԻԱՅՆԻ Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՍՏ.